ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունց

- **ԵՐԿԻՐ/ՔԱՂԱՔ/ԺԱՄԿԵՏ**

Բրյուսել (Բելգիայի Թագավորություն)

2018 թ. հոկտեմբերի 16-18-ը

- **ՆՊԱՏԱԿԸ**

«ԲՈՋԱՐ» մշակութային կենտրոնի տնօրենի, ԵՄ բարձրաստիճան պատասխանատուների հետ Հայաստան-ԵՄ մշակութային համագործակցության շրջանակում կայանալիք մի շարք ծրագրերին հայ արվեստագետների մասնակցության վերաբերյալ բանակցությունների վարում, ինչպես նաև եվրոպական երկրներում գործող խոշորագույն մշակութային հաստատությունների ներկայացուցիչների հետ համագործակցության նոր ձևաչափերի մշակում:

«Բողոսյան» հիմնադրամի տնօրեն Լուսա Սալամեի հրավերով 2018 թ. հոկտեմբերի 16-18-ը մեկնեցի Բելգիայի Թագավորություն՝ Բրյուսելի «ԲՈՋԱՐ» մշակութային կենտրոնի տնօրենի, ԵՄ բարձրաստիճան պատասխանատուների հետ Հայաստան-ԵՄ մշակութային համագործակցության շրջանակում կայանալիք մի շարք ծրագրերին հայ արվեստագետների մասնակցության վերաբերյալ բանակցություններ վարելու, ինչպես նաև եվրոպական երկրներում գործող խոշորագույն մշակութային հաստատությունների ներկայացուցիչների հետ համագործակցության նոր ձևաչափեր մշակելու նպատակով:

Հոկտեմբերի 16-ին հանդիպում ունեցա ԵՄ հարևանության և բանակցությունների ընդլայնման տնօրինության արևելյան հատվածի ղեկավար Լոուրենս Մերեդիթի հետ: Իմ

շնորհակալությունը հայտնեցի պարոն Մերեդիթին հանդիպման կազմակերպման համար և տեղեկացրի եվրոպական երկրների հետ համագործակցության ծրագրերի մասին: Վերահաստատեցի ՀՀ մշակույթի նախարարության պատրաստակամությունը շարունակելու փոխշահավետ համագործակցությունը ԵՄ ձևաչափով և առաջարկեցի մոտ ժամանակներում դիտարկել համատեղ կարճաժամկետ ծրագրերի և նախագծերի իրականացման հարցը: Այս համատեքստում առաջարկեցի 2019 թ. ընթացքում կայանալիք ԵՎՐՈՊԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ լայնամասշտաբ նախագծի շրջանակում իրականացնել կարճաժամկետ մի շարք ծրագրեր:

Իր պատասխան խոսքում պարոն Մերեդիթը շնորհակալություն հայտնեց գործնական առաջարկի համար և առաջարկեց ավելի առարկայական բանակցություններ սկսելու նպատակով այս գործընթացին ներգրավվի նաև Հայաստանում Եվրամիության դեսպան Պյոտր Սվիտալսկին:

Հանդիպման ավարտին անդրադարձ կատարվեց նաև Հայաստանում ստեղծարար ոլորտի ակտիվացման և այս կապակցությամա պարոն Մերեդիթը առաջարկեց մոտ ժամկետներում նոր համագործակցության առաջարկ ներկայացնել:

Օրվա ավարտին կայացավ իմ առանձնազրույցը Բելգիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Թ. Մարգարյանի հետ: Խնդրեցի պարոն դեսպանի միջնորդությունն ու աջակցությունը առաջիկայում կայանալիք «Եվրոպալիա» արվեստի միջազգային փառատոնին հայաստանյան հայտի ներկայացման հարցում: Քննարկվեց նաև Հայաստանի մասնակցությունը եվրոպական խոշորագույն հիմնադրամների հովանավորությամբ կազմակերպելու հարցը:

Հոկտեմբերի 17-ին առավոտյան այցելեցի 1928 թ. ի վեր գործող եվրոպական խոշորագույն մշակութային կենտրոններից մեկը՝ «ԲՈՋԱՐ» մշակութային կենտրոնը: Այն նախատեսված է ժամանակակից արվեստի ցուցահանդեսների, երաժշտական երեկոների, հայտնի արվեստագետների և մշակութային գործիչների հետ հանդիպումների անցկացման համար, կենտրոնում գործում է թեմատիկ գրադարան, կոնֆերանս դահլիճներ և այլն: Շրջայց կատարելուց հետո հանդիպեցի կենտրոնի ներկայացուցիչներից մեկին: Առանձնազրույցի ընթացքում տեղեկացա, որ 2019 թ. հունվարի երկրորդ կեսին «ԲՈՋԱՐ» մշակութային կենտրոնում կանցկացվեն կինո ցուցադրություններ և առաջարկեցի դրանցում ընդգրկել նաև հայաստանյան ներկայացուցիչներին:

Հանդիպման ընթացքում եվրոպացի գործընկերոջս կողմից հնչեց առաջարկ՝ Հայաստանում «ԲՈՋԱՐ» մշակութային կենտրոնի աջակցությամբ գիտաժողով, ինչպես նաև համատեղ ծրագրերի շրջանակում հայ ժամանակակից արվեստի ցուցահանդես կազմակերպելու և անցկացնելու վերաբերյալ: Ծրագրի տեխնիկական մանրամասները քննարելու նպատակով առաջարկեցի մոտ ժամկետներում Բրյուսել գործուղել նախարարության աշխատանքային խումբ:

Նույն օրը կայացավ իմ հանդիպումը Բելգիայի մշակույթի, երեխաների պաշտպանության և սպորտի նախարար տիկին Ալդա Գրեյոլիի հետ, որին ներկա էր նաև Բելգիայում ՀՀ դեսպանության աշխատակցուհի Լիլիթ Խաչատրյանը: Շնորհակալություն

հայտնեցի տիկին Գրիոյլիին հանդիպման համար և ներկայացրի Հայաստան-ԵՄ մշակութային համագործակցության շրջանակում իրականացվելիք ծրագրերը, մասնավորապես՝ տեղեկացրի 2019 թ. անցկացվելիք ԵՎՐՈՊԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ

ՕՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ծրագրի մասին: Երկու երկրների միջև մշակութային կապերի ընդլայնման և խորացման նպատակով առաջարկեցի անցկացնել Հայաստանում Բելգիայի մշակույթի օրեր և Բելգիայում Հայաստանի մշակույթի օրեր: Համագործակցության նոր ձևաչափերի մասին բանակցություններ վարելու և Հայաստանի մշակույթին ծանոթանալու նպատակով հրավիրեցի տիկին Գրիյոլիին 2019 թ. հունվար-փետրվար ամիսներին այցելել Հայաստան:

Այնուհետև ներկա գտնվեցի «East-West Residency» ծրագրի մեկնարկին: Այն հնարավոր եղավ իրականացնել ՀՀ մշակույթի նախարարության, «Բողոսյան» և «Creative Armenia» հիմնադրամների համագործակցությամբ: Ելույթումս կարևորեցի Հայաստան-ԵՄ կապերի ամրապնդումը և հույս հայտնեցի, որ ծրագիրը գործնականում լավ հիմք կհանդիսանա հայ ստեղծագործողների աշխատանքները եվրոպական հեղինակավոր հարթակներում ներկայացնելու համար: «Բողոսյան» հիմնադրամի գլխավոր տնօրեն Լումա Սալամեն իր պատասխան խոսքում շնորհակալություն հայտնեց արդյունավետ համագործակցության համար և տեղեկացրեց, որ «Բողոսյան» հիմնադրամը բաց է հայ արվեստագետների համար:

Օրվա ավարտին կայացավ հանդիպում ՀՅԴ Բելգիայի Հայ Դատի Հանձնախմբի և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության անդամների հետ:

Շնորհակալության եմ հայտնում Բելգիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. պարոն Թաթուլ Մարգարյանին և դեսպանության ողջ անձնակազմին՝ գործուղմանս ընթացքում աջակցելու համար:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ/ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- ԵՄ հարևանության և բանակցությունների ընդլայնման տնօրինության արևելյան հատվածի ղեկավար Լոուրենս Մերեդիթի հետ կայացած հանդիպման արդյունքում նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց 2019 թ. ընթացքում կայանալիք ԵՎՐՈՊԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ լայնամասշտաբ նախագծի շրջանակում ԵՄ-ի հետ համատեղ իրականացնել կարճաժամկետ մի շարք ծրագրեր:

- ԲԹ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Թ. Մարգարյանի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց կայանալիք «Եվրոպալիա» արվեստի միջազգային փառատոնին հայաստանյան հայտի ներկայացման, ինչպես նաև Հայաստանի մասնակցությունը եվրոպական խոշորագույն հիմնադրամների հովանավորությամբ կազմակերպելու հարցում դեսպանության աջակցության վերաբերյալ:

- «ԲՈՋԱՐ» մշակութային կենտրոնի ներկայացուցչի հետ կայացած հանդիպման ընթացքում պայմանավորվածություններ ձեռք բերվեցին 2019 թ. հունվարի երկրորդ կեսին կայանալիք կինոյի ոլորտին նվիրված ցուցադրությունում հայաստանյան ներկայացուցիչներին ընդգրկելու, Հայաստանում գիտաժողով, ինչպես նաև համատեղ ծրագրերի շրջանակում հայ ժամանակակից արվեստի ցուցահանդես կազմակերպելու և անցկացնելու վերաբերյալ:

- Բելգիայի մշակույթի, երեխաների պաշտպանության և սպորտի նախարար տիկին Ալդա Գրեյոլիի հետ հանդիպման ընթացքում քննարկվեց Հայաստան-ԵՄ մշակութային համագործակցությունը և 2019 թ. անցկացվելիք ԵՎՐՈՊԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ծրագիրը: Մշակութային կապերի ընդլայնման և խորացման նպատակով առաջարկվեց անցկացնել

Հայաստանում Բելգիայի մշակույթի օրեր և Բելգիայում Հայաստանի մշակույթի օրեր: Այս գործնական առաջարկները մանրամասն քննարկելու նպատակով տիկին Գրիյոլիին փոխանցվեց Հայաստան այցելելու հրավերը:

- «Բողոսյան» հիմնադրամի տնօրեն տիկին Սալոմեի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց 2019 թվականից հայ արվեստագետների աշխատանքները ներկայացնելու վերաբերյալ:

ՀՀ մշակույթի նախարարի պաշտոնակատար՝

10/29/2018

X

ԼԻԼԻԹ ՄԱԿՈՒՆՑ

Signed by: MAKUNTS LILIT 5711830910

Լ. ՄԱԿՈՒՆՑ